ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 207-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-Ի N 399-Ա ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 7-Ի N 180-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-Ի N 399-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2022 թվականի հունիսի 8-ի «ՋիԷյջԷմ-Արմենիա» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Վայոց ձորի մարզի Արենի համայնքի մանկապարտեզի կառուցում» ծրագրի մասին» N 399-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 1-ին կետում «1,202,440,885,37» թիվը փոխարինել «1,266,589,390.77» թվով.

2) 2-րդ կետում «577,190,678,43» թիվը փոխարինել «627,391,068.66» թվով.

3) հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2023 թվականի մարտի 7-ի «Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2022 թվականի հունիսի 8-ի

N 399-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու և նույն որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին» N 180-Ա որոշման 2-րդ կետում «625,250,206.94» թիվը փոխարինել «597,225,165.29» թվով:

3. Սահմանել, որ «ՋիԷյջԷմ-Արմենիա» զարգացման հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 00235036) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2022 թվականի հունիսի 8-ի N 399-Ա որոշման իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «ՎԱԵԼԿՈՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02596346) 2024 թվականի փետրվարի 16-ին կնքված N 202402/01 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 38,453,156.82 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Քիդ Սպորտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00518325) 2024 թվականի փետրվարի 19-ին կնքված N 19.02-24/1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մանկական խաղային համալիրի խաղասարքերի մատակարարման և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 3,520,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

26.03.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ